8299

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

Հ. Կ. (Բ) Կ. ԾԵՐԿՈՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Լ. Մ. ԿԱԳԱՆՈՎԻՉ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՕՏՏԽԽ ՄԱՍԻՆ

3 ԿՈ3
4-12

ԿՈՒՍՀՐԱՏ
1933 ՅԵՐԵՎԱՆ

1 6 MAY 2013

ЗКПЗ
4-12
դ

Գրքեր տարբեր լեզուներով, միացիչ

2 4 SEP 2006

0 9 DEC 2000

Լ. Մ. ԿԱԳԱՆՈՎԻՉ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԶՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ՃԱՌ ՄՈՍԿՎԱՅԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՏԻՎՈՒՄ
1933 ԹՎԻ ՄԱՅԻՍԻ 22-ԻՆ

Z/03
1010
42656

ՀՍՍՀ — Ս.Ս.Հ.Մ. Գիտությունների Ակադեմիայի Մ. Մաշտոցի անվան Ձեռագրերի ինստիտուտ

ԿՈՒՍՀՐԱՏ
1933 ՅԵՐԵՎԱՆ

8299
MA

1. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԶՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մեր կուսակցության մեջ գտնվող 3.200.000 անդամների ու թեկնածուների հավարյա կեսը (մոտ 1.500.000-ը, նույն թվում 250 հազար կուսակցության անդամ ու 1 միլիոն 250 հազար թեկնածու), յերբեք զտման չի յենթարկվել։ Հենց այդ արդեն ցույց է տալիս, թե ինչպիսի հսկայական նշանակություն է ստանում զտումը՝ կուսակցության անդամներին ու թեկնածուներին գաղափարական-քաղաքական նոր մակարդակի բարձրացնելու համար։ 3.200.000 հոգի ամեն մեկն առանձին ամբիոն է բարձրանալու և հաշիվ է տալու կուսակցության առաջ, տասնյակ միլիոնավոր անկուսակցականների առաջ, հաշիվ են տալու, թե նրանցից ամեն մեկն ինչով է արժանացել մեծ կուսակցության անդամի կոչումը կրելու, պատմելու յեն իրենց աշխատանքի մասին, ասելու յեն, թե ինչպես են հասկանում կուսակցության առաջ դրված խնդիրները և հայտնելու յեն իրենց պատրաստակամությունը՝ այսուհետև ևս պայքար մղելու կուսակցության գործի համար, բանվոր դասակարգի գործի համար։

Քաղաքական կուսակցությունների պատմությունը չգիտի այնպիսի ուժի ու զորության որինակներ, վոր ցուցաբերում է մեր կուսակցությունը հենց զտման ակտում։ Ցավ պատահական չէ այդ։ Բղխում է այդ հենց մեր կուսակցության բնույթից, վորով տարբերվում է նա աշխարհում գոյություն ունեցող և գոյություն ունեցած քաղաքական բոլոր կուսակցություններից։ Մեր կուսակցության կառուցվածքը, նրա աշխատանքի մեթոդները, կուսակցության ամեն մի անդամի դրությունն ու պարտականությունները առանձին-առանձին ամբողջապես բղխում են այն մեծ նպատակներից, վորը դնում է իր առաջ և կենսագործում է մեր կուսակցությունը։

Մեր կուսակցությունը վորոշ դասակարգի՝ հեղափոխական պրոլետարների դասակարգի համախոհների մի մարտական դաշինք է, վոր ստեղծվել է կամավորության հիմունքներով, մի դաշինք, վորը նպատակ է դրել վերացնել կապիտալիզմը և հաստատել մարդկային հասարակության նոր կարգեր՝ կոմունիզմի կարգեր։ Այնպիսի դաշինք, վորն առանձին անդամների շահերը յենթարկում է ամբողջի շահերին, ամբողջ կուսակցության շահերին, ամբողջ դասակարգի շահերին։ Այնպիսի դաշինք, վորն ոժտված է յերկաթե կարգապահությամբ՝ մարտական կուսակցության գոյության այդ հիմքով։ Այնպիսի դաշինք, վորը միասնաբար է մտածում, միասնաբար է գործում։ Այնպիսի դաշինք, վորը պայքարում է ընդդեմ իր միջավայրում արտահայտվող ամեն տեսակ տարաձայնության, անկարգապահության, մանր-բուրժուական յերերումների ու տատանումների, վորոնք վնասում են կուսակցության մարտունակությանը։

«Կուսակցությունը մի կամավոր միություն է, վորն անխուսափելիորեն կգայթակղվեր, նախ՝ գաղափարականորեն, իսկ հետո էլ նյութականորեն, յեթե նա չմաքրեր իրեն այն անդամներից, վորոնք քարոզում են հակակուսակցական հայացքներ։ Իսկ կուսակցականի ու հակակուսակցականի սահմանը վորոշելու համար ծառայում է կուսակցության ծրագիրը, ծառայում են կուսակցության տակտիկական բանաձևերը և նրա կանոնադրությունը» (Լենին, «Կուսակցական կազմակերպությունը և կուսակցական գրականությունը», ռուս. հրատ. հատոր 8-րդ, եջ 389)։

Կուսակցության շարքերը մաքրելը նույնպիսի անհրաժեշտ պրոցես է, ինչպիսին է մեր առողջ որգանիզմը վատառողջ տարրերից մաքրելու պրոցեսը։

Մինչև հեղափոխությունը կուսակցության շարքերը մաքրելու պրոցեսն ավելի շատ ընթանում եր այսպես ասած տարերային կարգով։ Դրությունն ինքը, հենց մեր կուսակցության գոյության պայմանները նպաստում էին մեր շարքերը բնականաբար մաքրելու։ Արդարև, ցարիզմի պայմաններում, ձերբակալությունների, հալածանքների, զրկանքների պայմաններում մղվող պայքարը մարդուն դնում էին այնպիսի պայմանների մեջ, վոր նախապես մինչև վերջը պետք է մտածեր, թե ինչ գործի յե ձեռնարկում նա։ 17—18 տարեկան յերիտասարդները՝ պատանին կամ աղջիկը, վոտք դնելով հեղափոխական պայքարի ուղին, իրենց համար պետք է վճռեին, վոր նրանք իրենց անձնականը յենթարկում են հեղափոխական շարժման ընդհանուր շահերին, պրոլետարական հեղափոխության շահերին, կոմունիզմի շահերին։ Այդ մարդիկ պատրաստ էին բանտ, աքսոր, Սիբիր գնալ։ Նրանք ապրում էին ընդհատակի ծանր պայմաններում։ Ուստի մինչև հեղափոխությունը կուսակցության մաքրելու պրոցեսը կատարվում եր առանց հատուկ զոհերի։ Նա մեծ մասամբ ընթանում եր այսպես ասած բնական մաղման ճանապարհով։ Ով թույլ եր, նա նահանջում եր։ Կուսակցությունը չեր զտվում հատուկ զոհերի միջոցով, նա ինքնազտվում եր։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, իշխանությունը նվաճելուց հետո, իհարկե, մեր շարքերը սողոսկեցին մի շարք խորթ տարրեր։ Կուսակցությունը յեռանդագին պայքար է մղել իշխանության ձգտող կարյերիստների և մորթապաշտների դեմ։ Սակայն հետո սկսվեցին քաղաքացիական պատերազմի ճակատները։ Մահու և կենաց պայքար Կալեդինի, չեխո-սլովակների, Կոլչակի, Դենիկինի, Յուդենիչի, լեհերի և Վրանգելի դեմ։ Այդ ծանր որերին ճակատներում մղվող պայքարը խանգարում եր մորթապաշտներին և կարյերիստներին խցկվել կուսակցության մեջ։ Այն որերը, յերբ Դենիկինը մոտենում եր Տուլային, կուսակցությունը կազմակերպում եր կուսակցական շաբաթներ, ընդունում եր այն տասնյակ հազարավոր բանվորներին, վորոնք կամավոր կերպով մտնում էին նրա շարքերը՝ խորհրդային իշխանության թշնամիների դեմ կռվելու համար։ Սակայն այդ որերին ևս կուսակցությունը վոչ մի բոպե չի թուլացրել իր պայքարը մեր շարքերում գտնվող այն խորթ տարրերի դեմ, վորոնք թուլացնում էին մեր կուսակցության ու պետության մարտունակությունը, վորոնք խախտում էին կարգապահությունը և իրենց անձնական շահերը ավելի բարձր էին դասում, քան պրոլետարական յերկրի պաշտպանության շահերը, հեղափոխության շահերը։

Քաղաքացիական պատերազմը վերջանալուց հետո դրությունը փոխվեց։ Կուսակցությունը հռչակեց նեպը։ Այդ պայմաններում կուսակցությունից պահանջվեց վճռական հակահարված տալ կուսակցության մեջ խցկված մորթապաշտ ու կարյերիստ տարրերին։

Անհրաժեշտ եր ուժեղացնել պայքարը հանուն կուսակցության շարքերի տոկունության, ուժեղացնել պայքարը պրոլետարական դիկտատուրան թուլացնելու մանր-բուրժուական ձգտումների դեմ։ Այն ժամանակվա բոլոր ոպոզիցիաները, սկսած տրոցկիստներից, դեմոկրատական ցենտրալիստներից, այսպես կոչված՝ «բանվորական ոպոզիցիայից» և վերջացրած նրանց բացահայտ հակահեղափոխական ճյուղավորումներով (մյասնիկովականները և այլն), նրանք բոլորն ել կուսակցության դեմ, պրոլետարիատի դիկտատուրայի դեմ կատարվող բուրժուական ու մանր-բուրժուական գրոհների արտահայտություն եյին։ Ըստ եյության նրանք բոլորն ել հանդում եյին կապիտալիզմի վերականգնման։ Կուսակցությունն այն ժամանակ վոչ միայն վճռական հակահարված տվեց նրանց բոլորին, վոչ միայն ջախջախեց անցյալի այդ բոլոր ուժերը, այլև այն ժամանակ հայտարարեց իր շարքերի ընդհանուր զտումը խորթ և նրա մեջ խցկված տարրերից։

1921 թվի զտման սկզբին կուսակցության մեջ կար 660 հազար անդամ և թեկնածու։ Զտմամբ կուսակցությունից վտարվեց և կամավոր կերպով հեռացավ 175 հազար հոգի, այսինքն՝ ամբողջ կազմի մոտ 26 տոկոսը։ Թեպետ կուսակցությունը մի քառորդով կրճատվեց, բայց նա զգալի չափով ավելի ուժեղացավ։

Յերկրորդ, արդեն մանանկի, զտումը վերաբերում է 1924 թվին՝ խորհրդային ու բուհական բջիջների զտումը, և 1925 թվականին՝ գյուղական բջիջների ստուգումը։ Նեպի ծավալման շրջանն եր այդ, թե քաղաքում և թե գյուղում մանր-բուրժուական տարրերի աշխուժացման շրջանը, մի շրջան, յերբ այդ մանր-բուրժուական տարրերն սկսեցին դրսևորել իրենց «ձախ» դրոշի տակ։ Պրոլետարական դիկտատուրայի հիմունքների դեմ ուղղված բուրժուական ու մանր-բուրժուական գրոհների յերկրորդ տուրն եր այդ, գրոհներ, վորոնք քողարկված եյին դեմոկրատիային վերաբերյալ «ձախ» ֆրազներով։

Կուսակցության 13-րդ համագումարը «Կուսակցական շինարարության հերթական խնդիրների մասին» իր ընդունած բանաձևում մատնանշել եր.

> «Կուսակցությունն արդեն սկսել է հատուկ աշխատանք վոչ-բանվորական կազմ ունեցող կուսակցական բջիջներն ստուգելու և բարելավելու համար։ Այդ ստուգման խնդիրն է՝ նախ և առաջ մաքրել կուսակցությունը սոցիալապես խորթ և քայքայված տարրերից, ինչպես և մաքրել կուսակցությունը վոչ բանվորական կազմի այն տարրերից, վորոնք կուսակցության մեջ գտնվելու ժամանակամիջոցում իրենց չեն դրսևորել վորպես կոմունիստներ՝ այս կամ այն պետական, տնտեսական և այլ կազմակերպությունների աշխատանքը բարելավելու գործում և անմիջական կապ չեն ունեցել բանվորական ու գյուղացիական մասսաների հետ»։

Տրոցկիստները, վորոնք ամեն մի փաստ ոգտագործում եյին կուսակցության վրա հարձակում գործելու համար, կրկնում եյին սովորական բուրժուական, գռեհիկ առասպելը մեր կուսակցության մասին, պատկերացնելով գործը այնպես, թե զտումը կուսակցության մեծամասնության ֆրակցիոն գործիքն է փոքրամասնության դեմ։

Ընկ. Ստալինը կուսակցության 13-րդ համագումարում պատասխանելով Պրեոբրաժենսկուն՝ ասում եր.

> «Պրեոբրաժենսկին, վորը գտնում է, թե զտումը կուսակցության մեծամասնության զենքն է ոպոզիցիայի դեմ, ըստ յերևույթին հավանություն չի տալիս զտման մեթոդներին։ Սկզբունքային հարց է այդ։ Պրեոբրաժենսկու կողմից խորը սխալ է այն, վոր նա չի հասկանում, թե կուսակցությունը չի կարող ամրանալ առանց յերերուն տարրերից պարբերաբար զտվելու»։

Ամեն մի պատմական ետապում, յերբ կուսակցությունը նոր աստիճանի յե հասցնում իր աշխատանքը, այդ յերերուն մանր-բուրժուական տարրերը սկսում են արգելակել նրա շարժումը։ Կուսակցության պարբերական զտումը խորթ, յերերուն, մանր-բուրժուական տարրերից՝ միշտ անհրաժեշտ պայման է յեղել, վոր կուսակցությունը հաջողությամբ կատարի իր մարտական խնդիրները։

Այդպես եր նաև 1929 թվականին, յերբ կուսակցությունն անցավ սոցիալիստական ծավալուն արշավին ամբողջ ճակատով, յերբ այդ սոցիալիստական ծավալուն արշավին դիմադրություն ցույց տվին կուսակցության մեջ գտնվող հետադեմ տարրերը, վորոնք ձևակերպվել եյին վորպես աջ թեքում։ Յերբ նրանք տրոցկիստների որինակով սկսեցին խանգարել կուսակցության յերկաթե կարգապահությունը, հանդես գալ կուսակցության վարած քաղաքականության դեմ, քարոզել կուլակային հակակուսակցա-

կան քաղաքականություն, յերբ նրանք փորձում եյին թուլացնել բանվորական մասսաների խանդավառությունը սոցմրցման ու հարվածայնության ասպարիզում, ինչպես անում եյին աջ ուկլոնիստական, տրեդյունիոնիստական պրոֆմիութենականները, կուսակցությունը վոչ միայն հակահարված տվեց նրանց, այլև ի պատասխան նոր թշնամի գրոհին, կազմակերպեց իր շարքերի զտումը, վորպեսզի ավելի հաջողությամբ արշավ կատարի կապիտալիստական տարրերի վրա, ամբողջ ճակատում։

Ընկեր Ստալինը Համկ(բ)Կ-ի Կենտկոմի ապրիլյան պլենումում (1929 թիվ) 1929 թվի զտման մասին ասում եր.

«Վերջապես կուսակցության զտման լոզունգի հարցը։ Ծիծաղելի կլիներ, յեթե կարծեյինք, թե մեր խորհրդային-տնտեսական, արհմիութենական ու կոոպերատիվ կազմակերպությունները կարելի յե ամրացնել, կարելի յե մաքրել բյուրոկրատիզմի գարշանքից, առանց օրելու կուսակցությունն ինքը։ Վոչ մի տարակույս չի կարող լինել, վոր բյուրոկրատիկ տարրերը կենդանի յեն վոչ միայն տնտեսական, կոոպերատիվ, արհմիութենական-խորհրդային կազմակերպություններում, այլև հենց կուսակցության կազմակերպություններում։ Յեթե կուսակցությունը այդ բոլոր կազմակերպությունների ղեկավար ուժն է, ապա պարզ է, վոր կուսակցության զտումը այն անհրաժեշտ պայմանն է, առանց վորի մինչև վերջը չի կարելի կատարել բանվորական մյուս բոլոր կազմակերպությունների աշխուժացումն ու բարելավումը։ Այդտեղից բղխում է կուսակցության զտման լոզունգը»։

Հատկապես այն պատճառով, վոր կուսակցությունը կարողացավ հաստատապես ու անշեղորեն մաքուր ու տոկուն պահել իր շարքերը, հատկապես այն պատճառով, վոր կուսակցությունը պայքար է մղում բոլոր աջ և «ձախ» ուկլոնիստական տարրերի դեմ, ճահճի դեմ, ամեն տեսակ անկայունության դեմ, մենք կարողացանք իրականացնել այնպիսի մեծագույն, հոյակապ պատմական խնդիրներ, ինչպիսիք դրված եյին առաջին հնգամյակում։ Մենք կարողացանք Ռամզիններին, կուլակներին ջախջախել միմիայն այն պատճառով, վոր մեր կուսակցությունը լենինյան Կենտրոնական Կոմիտեյի ղեկավարությամբ կարողացավ ամրացնել իր շարքերը, կարողացավ առանց նկատի ունենալու անձնավորությունները, մաքրել իրեն բոլոր նրանցից, ովքեր հեռանում եյին լենինիզմից և, մենշևիկների նման դավաճանելով պրոլետարական հեղափոխության շահերին, կուսակցության մեջ դառնում եյին պրոլետարիատի թշնամի դասակարգերի շահերի պաշտպանը։

Կուսակցության ղեկավարությունը, Կենտրոնական Կոմիտեյի ղեկավարությունը ուժ առավ, նվաճեց մասսաների վստահությունը և տարավ իր հետևից միլիոնավորներին այն պատճառով, վոր այդ ղեկավարությունը կարողացավ պրոլետարիատի դիկտատուրայի բոլոր տարիների ընթացքում հավատարիմ մնալ այն սկզբունքներին, վորոնց հիմք եր դրել Լենինը մեր կուսակցության ծագման սկզբին և վորոնք զարգացում ստացան կուսակցության հետագա ճանապարհին, վորովհետև Լենինից հետո մեր կուսակցության գլուխն անցավ մեծ մարքսիստ-լենինիստ Ստալինը, վորը կարողացավ նույնպես Լենինի նման անշեղորեն պայքար մղել ամեն գույնի ոպորտունիստների դեմ և ապահովել կուսակցության համար առաջին հնգամյակի մեծագույն պատմական հաղթանակները։ (Բուռն ծափեր)։

2. 1933 ԹՎԻ ՁՄՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մարդկության պատմությունը չի իմացել այնպիսի արագ և խորը արմատական փոփոխություններ յերկրի եկոնոմիկայում, ինչպիսիք կատարեցինք մենք վերջին 5 տարում։

Յերկրի սոցիալիստական վերակառուցման ասպարիզում տարած մեծագույն հաղթանակները վորոշում են ժամանակակից տնտեսական-քաղաքական ամբողջ դրությունը։ Միանգամայն բնական է, վոր այդպիսի վիթխարի, բուռն հեղափոխական աճումը չի կարող վորոշ դժվարություններ չառաջացնել։ Նույնիսկ մեր թշնամիները հարկադրված են խոստովանել բոլորի համար ակներև, միանգամայն անվիճելի մեր հաղթանակները։ Թշնամիները փորձում են մխիթարել իրենց գոյություն ունեցող դժվարություններով, ամեն կերպ ուռցնելով վերջիններս և փութաջանորեն կոծկելով այն հիմնական փաստը, վոր մեր դժվարությունները բղխում են մեր աճումից, վոր դրանք արմատապես տարբերվում են այն, յես կասեյի՝ վոչ թե դժվարություններից, այլ

հոգևարքից, վորն ապրում է այսոր կապիտալիստական աշխարհը։ Մեր շարքերում ել կան առանձին մարդիկ, վորոնք վոչ միշտ են ճիշտ ըմբռնում մեր դժվարությունները։ Մարքսը, Լենինը Ստալինը մեզ սովորեցրել և սովորեցնում են տեսնել բուն կյանքում թաքնված հակասությունները։ Մեզ համար նմանապես կատարելապես պարզ պետք է լինի, վոր մեր հաղթանակները սոցիալիստական շինարարության ասպարիզում չեն բացառում, այլ յենթադրում են մի շարք դժվարություններ ու թերություններ։ Ամբողջ հարցը միայն այն է, վոր մենք հասկանանք այդ դժվարությունների, վորպես աճման դժվարությունների բնությունը։

Յեթե մենք այժմ չունենայինք, որինակ, այնպիսի մի հզոր ինդուստրիա, տրակտորային ու ավտոմոբիլային հսկաներ, մետաղագործական և մեքենաշինական գործարաններ, հանքահորեր, խորհտնտեսություններ ու կոլտնտեսություններ, մենք կունենայինք վորակապես բոլորովին այլ բնույթ ունեցող դժվարություններ։ Դրանք կլինեյին այնպիսի դժվարություններ, վորոնք բնորոշվում են լինել-չլինելու հարցով։ Դա կլիներ պրոլետարական հեղափոխության կյանքի ու մահվան հարցը, դա կլիներ մեր կուսակցության հենց գոյության հարցը։

Մի թե կարելի յե սոցիալիստական շինարարության պրոցեսում մեր կրած առանձին դժվարությունները վորևե չափով համեմատել այն բանի հետ, վորը տեղի կունենար, յեթե կուսակցությունը վոտք դներ տրոցկիստների ու աջ ոպպոնիստների դավաճանական ուղին։ Մենք վոչ միայն չեյինք ունենա սոցիալիստական յերկրի աճումը, կուսակցության աճումը, այլ մենք կունենայինք խորհրդային պետության քայքայումը, կուսակցության՝ վորպես պրոլետարական կուսակցության քայքայումը։

Մանր-բուրժուական ֆրազյորը, ձևականորեն մտածող սխեմատիկը թերևս կարող եր բռնել մեզ հակասության մեջ։ «Այդ ինչպես է, վոր դուք խոսում եք նվաճումների մասին, աճման մասին և միաժամանակ հայտարարում եք կուսակցության գտումը խորթ ու խցկված տարրերից»։ Սակայն այդպիսի սխեմատիկ պատկերացումը նախապես ձախողման է դատապարտված։ Կուսակցությունն իր շարքերի զտման հարցն է դնում վոչ թե այն պատճառով, վոր նա թույլ է, այլ այն պատճառով, վոր նա ամրակուռ և ուժեղ է։

Մենք հաշվի յենք առնում, վոր մեր կուսակցության հսկայական աճումը և նոր, բարդ խնդիրները, վորոնք կանգնած են մեր առաջ պայքարի նոր ետապում, յերկրորդ հնգամյակի իրականացման պայմաններում, պահանջում են մեր շարքերի նոր ստուգում և մաքրում կուսակցությանը ոտար տարրերից, վորոնք անխուսափելիորեն թափանցում են աշխարհումս մեծագույն պետության գլուխը կանգնած կուսակցության շարքերը։

Սոցիալիստական տնտեսության վերելքը, բանվոր դասակարգի և կոլտնտեսականների աճումը չտեսնված չափով ստվարացրին կուսակցության շարքերը։ Յերկու և կես տարվա ընթացքում կուսակցությունն ավելացավ մի միլիոն 400 հազար հոգով։ Այդ վկայում է լայն բանվորական ու կոլտնտեսային մասսաների հրսկայական վստահությունը, սերը և ոժանդակությունը կուսակցությանը։ Կուսակցությունը դիտի այդ, կուսակցությունը հպարտանում է դրանով։ Սակայն մեր կուսակցությունը միշտ աչքի յե ընկել և աչքի յե ընկնում նրանով, վոր յերբեք մանր-բուրժուականորեն չի տարվել սեփական հաջողություններով, նա միշտ կարողացել է և կարողանում է մարքսիստաբար, լենինաբար, ստալինաբար վերլուծել փաստերը զգաստ, դիտել իր նվաճումները և աճումը, կարողացել է զգաստ հաշվի առնել դժվարությունները և թերությունները։

Հենց այդ զգաստ վերլուծումից յելնելով կուսակցությունը հաշվի յե առնում, վոր չնայած մեր նվաճումներին, չնայած այն բանին, վոր մենք կուլակին ջախջախեցինք, չնայած մենք հիմնականում վերացրինք նրան վորպես դասակարգ ԽՍՀՄ-ի հիմնական հացահատիկային շրջաններում, չնայած կոլտնտեսական շարժման մեծագույն հաղթանակներին, չնայած կապիտալիզմի արմատախիլ արվելուն, այդ արմատները դեռ գոյություն ունեն, դասակարգային պայքարը շարունակվում է և շարունակվելու յե սուր ձևերով։

Մեր կուսակցությունը ամենայն սրությամբ ու հաստատակամությամբ, ինչպես մինչև այժմ, անհաշտ պայքար է մղում և մղելու յե այն բոլոր ոպորտունիստական, ուկլոնիստական, ճահճացած տարրերի դեմ, վորոնք փորձում են դեպի հետ քաշել մեզ։ Կուսակցությունը տեսնում է կուսակցության մեջ սողոսկած դասակարգային թշնամու, նրա գործակալության հարմարվելու բոլոր մանյովրները։

Կուլակը փոխում է իր գործելակերպը։ Նա տեսնում է, որ կոլտնտեսությունները հաղթանակում են, նրանց չի կարելի հաղթել։ Կուլակը տեսնում է, որ մոտենում են իր գոյության վերջին օրերը և նա բնականաբար պատրաստ է դիմելու պայքարի բոլոր միջոցներին, որոնց թվում նաև «գաղտագողի» թափանցել կոլտնտեսության մեջ և ներսից աշխատանք կատարել այնտեղ։ Դասակարգայնորեն թշնամի տարրերը նույնպես «գաղտագողի» խցկվում են կուսակցության մեջ՝ իրենց ավելի լավ ապահովելու համար։ Սակայն այստեղ ել կվրիպեն նրանք։ Կուսակցության զտումը նրանց կմերկացնի։

Ահա թե ինչու Կենտկոմի ու ԿՎՀ-ի որոշման առաջին կետում ասված է, թե զտման են յենթարկվում նախ և առաջ

> «դասակարգայնորեն խորթ և թշնամի տարրերը, որոնք խաբեբայությամբ թափանցել են կուսակցության մեջ և ձգտում են այնտեղ կուսակցության շարքերը քայքայելու նպատակով»։

Որ չնայած նախորդ զտումներին՝ մեզ մոտ դեռ մնացել են այդպիսի տարրեր և նրանց մի մասը խցկվել է 1930—33 տարիների ընթացքում, 1929 թվականի զտումից հետո, այդ յերևան բերվեց Հյուսիսային Կովկասի և Ուկրաինայի գյուղական կուսկազմակերպությունների զտման ժամանակ, որը տեղի ունեցավ 1932 թվի ձմռանը։ Դրա ցայտուն օրինակն է Արմավիրի մի խումբ աշխատողները։

Ռայոնական ՎՀ—ԲԳՏ նախագահի տեղակալ Ստալիշնովը սպիտակ բանակի սպա դուրս յեկավ, որը կամավոր կերպով ծառայել է Բուլակ-Բալախովիչի ջոկատում որպես շտաբ-կապիտան, ծառայել է Պետլյուրայի մոտ։

Քաղաքի կոմունալ տնտեսության վարիչ Կուդինը՝ խոշոր նավատերի որդի յե յեղել, 1917 թվին ավարտել է սպաների դպրոցը, ծառայել է և Սկորոպադսկու մոտ, այստեղից անցել է Կարմիր բանակը, մասնակցել է խորհրդային իշխանության դեմ ուղղված դավադրության, անցել է սպիտակների կողմը, ծառայել է սպայական գնդերում։ Նրանց ջախջախվելուց հետո մնացել է Կրասնոդարում որպես շարքային զինվոր և 1929 թվականին մտել է կուսակցության մեջ, թագցնելով իր անցյալը։

Ռայոնական հողբաժնի վարիչ Բոլդիրովը, Ավտոդորի նախագահ Պրիզը, որը կուսակցության անդամ են 1920 թվից, ծառայել են Կոլչակի մոտ 1919—1920 թվերին։

Մի շարք այդպիսի խորթ տարրեր հայտաբերվել են նաև մյուս շրջաններում։

Չի կարելի ասել, որ մարդկանց այդ կատեգորիան բազմաթիվ է։ Սակայն դրանք պրոլետարական դիկտատուրայի վոխերիմ թշնամիներն են, որոնք կուսակցության մեջ են խցկվել հատկապես նրա համար, որ թագցնեն խորհրդային իշխանության դեմ իրենց մղած կազմակերպված պայքարը։ Այդ մարդիկ գիտեն թափանցել նաև գործարանը, հագնել բանվորական յուղոտած բլուզ, ստանալ կուսակցական տոմս և խաբել բանվոր դասակարգին և նրա կուսակցությանը։ Դասակարգային այդ թշնամիներին մերկացնելու գործին պետք է ոգնեն բոլոր բանվորները, բոլոր աղնիվ աշխատավորները։

Կուսակցության զտման շրջանակները չափազանց նեղացված կլինեյին, յեթե զտումը միայն սահմանափակվեր խաբեբայությամբ կուսակցության մեջ խցկված այդ բացահայտ դասակարգային թշնամիներով և չմերկացներ այն բոլոր տարրերին, որոնք իրենք իրենց դրությամբ դուրս յեկած լինելով խորթ դասակարգերից, իրենց ամբողջ եյությամբ, կուսակցության քաղաքականությանը ցուցաբերած իրենց վերաբերմունքով կուսակցության մեջ հանդիսանում են թշնամի դասակարգերի գործակալներ։

Մեր կուսակցությունը իր ամբողջ պատմության ընթացքում անդուլ պայքար է մղել այդ տարրերի դեմ, միշտ կարողացել է յերևան բերել, մերկացնել, հրապարակ հանել ոչ միայն նրանց, որոնք բացեիբաց հանդես են յեկել կուսակցության դեմ, այլև այն ոպորտունիստներին, որոնք վարպետորեն, մենշևիկաբար հարմարվում եյին պայմաններին, «ժամանակի հովերին», աքողելով իրենց ոպորտունիստական եյությունը դատարկ, խաբեբա ֆրազներով։

Մեր կուսակցության հիմնական գծի հանրածանոթ հաղթանակների, ինդուստրացման և կոլտնտեսային շարժման անվիճելի հաղթանակների ներկա դրությունը տրոցկիստներին, աջ ուկլոնիստներին ու մյուս ոպորտունիստներին և նրանց հանդեպ հաշտվողական վերաբերմունք ցույց տվող տարրերին դրեցին կուսակցությանը և նրա Կենտկոմին գրոհելու անհնար դրության

մեջ։ Ուստի նրանք գործադրում են պայքարի նոր ձևեր։ Խոսքով համաձայնում են կուսակցության գծին, իսկ գործով սաբոտաժի յեն յենթարկում ու թուլացնում նրան։ Դրանով նրանք միայն արտացոլում են իրենց տերի, իրենց ներշնչողի՝ կուլակի և կապիտալիստական այլ տարրերի նոր գործելակերպը, տարրեր, որոնք, ինչպես վերևում ասացինք, փոխել են իրենց գործելակերպը և բացահայտ գրոհից անցել են «գաղտագողի» աշխատանքի։ Դրանք յերկերեսանիներ են։

Յերկերեսանիությունը վոչ այլ ինչ է, յեթե վոչ կուսակցության շարքերը, պրոլետարիատի շարքերը հին, բուրժուական, կուլակային «առաքինություն» մտցնելն է, վորովհետև խարեությունը, կեղծավորությունը, յերկերեսանիությունը առաքինություն եր համարվում բուրժուազիայի մոտ, առևտրականների ու կուլակների մոտ։ Այն կուլակը, այն առևտրականը, վորը չեր խարում, ինքն իրեն «չեր հարգում»։ Զուր չե, վոր գոյություն ունի առևտրական-կուլակային հին առած՝ «չխաբես՝ չես ծախի»։ Յերկերեսանիությունը կուլակ-վաճառականական բարոյականություն է։ Այն սրդը, վորն ընդունակ է յերկերեսանիություն անել, խարեությամբ թաքցնել կուսակցությունից իր իսկական հայացքները, վոտք է դնում կուսակցությանը դավաճանելու ուղին։

Այդ տեսանք մենք մի շարք նախկին տրոցկիստների ու աջ ուկլոնիստների կենդանի որինակներով։ Յերբ կուսակցությունը ջախջախեց նրանց բացահայտ մարտում, յերբ նրանք մերկացվեցին, վորպես դասակարգային թշնամիների գործակալներ, այդ մարդիկ խարեությամբ նորից խցկվում եյին կուսակցության մեջ, դիմում տալով, թե հրաժարվում են իրենց նախկին հայացքներից։ Սակայն նրանցից շատերը, չնայած իրենց այդ հայտարարություններին, հետո նորից վոտք են դրել ընդհատակյա ֆրակցիոն աշխատանքի ուղին, հակահեղափոխական խմբավորումներ կազմակերպելու ուղին։ Մեր կուսակցությունը՝ հեղափոխական պրոլետարիատի մարտական կուսակցությունը, չի կարող թույլ տալ, թույլ չի տվել և թույլ չի տա խաբել իրեն։ Մենք մերկացրել ենք և կմերկացնենք, վտարել ենք և կվտարենք նրանց, ովքեր թույլ կտան իրենց խաբել Լենինի մեծ կուսակցությանը։

Ահա թե ինչու Կենտկոմի ու ԿՎՀ-ի վորոշման յերկրորդ կետում ճշտիվ մատնանշված է, վոր կուսակցությունից զտվում են

«յերկերեսանիները, վորոնք ապրում են կուսակցությունը խաբելով, վորոնք թաքցնում են նրանից իրենց բուն ձգտումները և սքողված կեղծ յերդումով, թե «հավատարիմ են» կուսակցությանը, վորոնք փորձում են գործով վիժեցնել կուսակցության քաղաքականությունը»։

Ներկա զտման ժամանակ բացառիկ կարևոր տեղ պետք է գրավեն կուսակցության ու պետության կարգապահության հարցերը։ Կարգապահությունը միշտ հանդիսացել է մեր կուսակցական շինարարության անկյունաքարը։

«Ով թեկուզ չնչին չափով թուլացնում է պրոլետարիատի կուսակցության յերկաթե կարգապահությունը (մանավանդ նրա դիկտատուրայի ժամանակ), նա փաստորեն ոգնում է բուրժուազիային պրոլետարիատի դեմ» (Լենին, ռուս. հրատ., հատոր 25, եջ 191)։

Հատկապես դրանից յելնելով կուսակցությունը միշտ պայքար է մղել ֆրակցիաների ու խմբավորումների դեմ, կարգապահությունը խստիվ պահպանելու համար, կուսակցության վորոշումները լրիվ ու անվերապահորեն կատարելու համար։ Իսկ քանի վոր կուսակցությունը ղեկավարում է խորհրդային պետությանը, նա իր անդամներից պահանջում է որինակելի կերպով կատարել պետական որգանների վորոշումները։ Կուսակցությունն, որինակ, առանձնապես արթուն կերպով պահապան է կանգնել և կանգնած է Կարմիր բանակի կարգապահության։ Այժմ, յերբ կուսակցության վորոշումները նյութապես արտահայտվում են սոցիալիստական տնտեսավորման պլաններում, նա պահանջում է իր անդամներից վոչ թե պարզապես համաձայն լինել իր վորոշումներին, այլ գործնականորեն իրականացնել կուսակցության ու կառավարության վորոշումները և կուսակցության ու կառավարության սահմանած պլանները, պահանջում է ակտիվ պայքար մղել այդ վորոշումներն ու պլանները չկատարելու դեմ։

Ճիշտ այնպես, ինչպես ռազմական ճակատում նվիրվածությունը, անձնազոհությունը և կարգապահությունը ստուգվում եր վոչ թե կուսակցության այս կամ այն դիրեկտիվին կամ ընդ-

հանուր ստրատեգիկ պլանին պարզապես համաձայն լինելով, այլ իրական պայքարով այս կամ այն ճակատամասերը նվաճելու համար, թշնամուն նրա գրաված դիրքերից դուրս մղելու համար,— այնպես էլ այժմ կուսակցության անդամի անձնազոհությունը, նվիրվածությունը և կարգապահությունը ստուգվում է ոչ թե նրա ընդհանուր «սկզբունքային» համաձայնությամբ՝ կուսակցության գլխավոր գծին, այլ գլխավոր գծի նյութական բովանդակությունն համար մղվող կոնկրետ պայքարում, սոցիալիստական շինարարության պլաններն իրականացնելու համար մղվող պայքարում։

Այնինչ կան կուսակցության այնպիսի անդամներ, որոնք ոչ միայն չգիտեն կենսագործել կուսակցության ու կառավարության առաջադրած պլանը, այլ կատարելապես «որինական» և թույլատրելի չեն համարում վիճաբանել պլաններն իրական լինելու հարցի շուրջը, տարակուսանքի յենթարկել այդ պլանների իրագործելիությունը և փոխանակ մոբիլիզացիայի յենթարկելու իրենց ղեկավարած մասսաներին, կազմալուծում են նրանց, շաղակրատելով պլանների անիրագործելի լինելու մասին։ Այդպես պատահեց, որինակ, մի շարք շրջաններում հացամթերումների պլանը կատարելու ասպարիզում։ Այդպես է լինում արդյունաբերության ասպարիզում, գործարաններում, հանքահորերում, տրանսպորտում։

Այդ իսկ պատճառով Կենտկոմն ու ԿՎՀ-ն յերրորդ կետում մատնանշեցին, որ կուսակցությունից զրվում են

> «Նրանք, ովքեր բացահայտորեն ու թաղուն կերպով խախտում են կուսակցության ու պետության յերկաթե կարգապահությունը, ովքեր չեն կատարում կուսակցության ու կառավարության որոշումները, ովքեր տարակուսանքի յեն յենթարկում ու վարկաբեկում են կուսակցության որոշումներն ու նրա սահմանած պլանները, շաղակրատելով նրանց «անիրական» և «անիրագործելի» լինելու վերաբերյալ»։

Կուսակցությունը շարունակ անդուլ կերպով մաքրել է իր շարքերը այլասերված, բուրժուական տարրերի հետ շաղկապված մարդկանցից, կարյերիստներից ու մորթապաշտներից, բարոյապես քայքայվածներից։ Սակայն սխալ կլիներ կարծել, որ մեր կուսակցության մեջ այլևս այդպիսի տարրեր չկան։ Այսոր փոշին կարբես, այն էլ ոչ թե թրջած լաթով, այլ նույնիսկ նավթով, իսկ վաղը նորից փոշի կնստի։ Փոշին պետք է սիստեմատիկաբար մաքրել։ Կենտկոմի ու ԿՎՀ-ի վորոշման մեջ այդ ՀՕասակար «փոշուն», այդ տարրերին հատուկ տեղ է հատկացված։ Կուսակցությունից զրվում են՝

> «այլասերվածները, որոնք կապվել են բուրժուական տարրերի հետ, որոնք չեն ցանկանում գործով պայքար մղել դասակարգային թշնամիների դեմ, որոնք գործով պայքար չեն մղում կուլակային տարրերի դեմ, գռփողների, լոդրերի, հանրային գույքի գողերի ու հափշտակողների դեմ»։
>
> «Կարյերիստները, մորթապաշտները, բյուրոկրատացած տարրերը, որոնք կուսակցության մեջ գտնվելը, խորհրդային պետության ծառայելը ոգտագործում են իրենց անձնական, մորթապաշտ նպատակներով, նրանք, ովքեր կտրվել են մասսաներից, ովքեր անտեսում են բանվորների ու գյուղացիների կարիքներն ու պահանջները»։
>
> «Նրանք, ովքեր բարոյապես քայքայվել են, իրենց անվայել վարքագծով զցում են կուսակցության արժանապատվությունը, արատավորում են կուսակցության դրոշը»։

Կուսակցությունը միշտ պայքարել է այդ բոլոր տարրերի դեմ, սակայն Կենտկոմի և ԿՎՀ-ի վորոշումը շեշտում է նրանց վորոշ առանձնահատկությունը տվյալ ետապում։ Որինակ՝ տվյալ պահին այլասերվածը առանձնապես դրսևորում է իրեն նրանով, որ չի տեսնում, չի ուզում տեսնել դասակարգային թշնամուն, նա չի ուզում պայքար մղել դասակարգային թշնամու դեմ։ Դասակարգային թշնամու դեմ պայքարելու ցանկություն չունենալը առանձնապես ցայտուն կերպով յերևան է գալիս, որինակ՝ այնպիսի հարցում, ինչպիսին է սոցիալիստական սեփականության հափշտակման դեմ պայքարելը։ Նա չի ուզում հասկանալ, որ սոցիալիստական սեփականության հափշտակումն այժմ հանդիսանում

42696

է դասակարգային թշնամու պայքարի հիմնական մեթոդներից մեկը, որ կոլտնտեսային տնտեսության կազմալուծումը, գոփողությունը, լոդրությունը, գողությունը հանդիսանում է կուլակի կարևորագույն զենքերից մեկը, համարյա նրա վերջին զենքը՝ հաղթանակած կոլտնտեսային կարգերի դեմ նրա մղած պայքարում։ Այլասերվածը չի ուզում տեսնել այդ, չի ուզում պայքար մղել դրա դեմ։

Նույնը պետք է ասել նաև այն այլասերվածների մասին, որոնք կապվում են ՁԼասարար տարրերի հետ։ Նրանք իրենք ՁԼասարար չլինելով հանդերձ, փոխանակ դասակարգային պրոլետարական զգոնություն ցուցաբերելու, որ պետք է հանդիսանա բայշևիկի հիմնական հատկությունը, փոխանակ առողջ անվստահություն ցուցաբերելու, այնքան սերտորեն կապվում են խորթ միջավայրի հետ, խորթ, բուրժուական ու մանր-բուրժուական տարրերի հետ, որ չեն տեսնում նրանց մեջ թշնամուն։

Այլասերվածը չի ուզում տեսնել, որ ձեռնարկության մեջ խցկված կուլակը պարապուրդներ է կազմակերպում, վիժեցնում է արտադրության կարգապահությունը, հափշտակում է գործարանային բարիքը։ Այլասերվածը դրա վրա նայում է որպես սովորական անՁԼաս մի յերևույթի վրա, իրապես պայքար չի մղում արտադրությունը կազմալուծողների դեմ։

Առևտրական հիմնարկներում և կոոպերացիայում այլասերվածը պայքար չի մղում սոցիալիստական սեփականությունը պահպանելու համար, պահպանում է «նեպմանական վոգին», վատնում է հանրային բարիքը։

Վոչ պակաս վտանգավոր են նաև բյուրոկրատացած կոմունիստները, որոնք կորցրել են իրենց դասակարգային հոտառությունը, որոնք գերի յեն դարձել իրենց ապարատի խորթ տարրերին, կտրվել են մասսաներից, չեն կարողանում գործնականորեն ապահովել կուլակցական դիրեկտիՁԼերի իրականացումը։ Այդ տարրերը հաճախ մի ծայրահեղությունից մյուսի մեջ են ընկնում։ Մերթ նրանք չեն տեսնում դասակարգային թշնամուն, մատների արանքով են նայում նրա վրա, մերթ սկսում են աջ ու ձախ մեծ ծայրահեղություններ թույլ տալ, Շչեդրինի հերոսի նման տարվում են իրենց «վարչարարական» ուժով և խախտում են խորհրդային իշխանության սահմանած որենքները, ապստրինություն, կամայականություն են անում։

Այլասերվածների այդ կատեգորիայի հետ անմիջական կապ ունի կարյերիստների, մորթապաշտների, բյուրոկրատացած, բանվորներից ու գյուղացիներից կտրված մարդկանց կատեգորիան։ Այդ բոլոր մարդիկ իրենց աշխատանքի առանցքն են դարձնում իրենց սեփական, անձնական, մորթապաշտ շահերը։

Այդ կատեգորիան, ինչպես և այլասերվածների նախորդ կատեգորիան՝ նրանցից վոմանք դասակարգային զգաստությունը բթանալու պատճառով, մյուսները մորթապաշտ շահերից դրդված, քայքայում են խորհրդային ապարատը, թույլ են տալիս վիժեցնել և սաբոտաժի յենթարկել կուսակցական դիրեկտիՁԼերը։

Կարյերիստների, մորթապաշտների, բյուրոկրատացած տարրերի, ինչպես նաև վեցերորդ կատեգորիայի (բարոյապես քայքայված տարրերի) հայտաբերումը և զտումը զտման հանձնաժողովի կարևորագույն խնդիրներից մեկն է։

Զտման հանձնաժողովները պետք է զտման գործին մոտենան բայշևիկներին հատուկ ամբողջ լրջությամբ, խորությամբ ու հոտառությամբ։ Անհրաժեշտ է նախապես վերացնել ամեն մի շաբլոն, մեքենական մոտեցում։ Զտման հանձնաժողովի ամեն մի անդամ պետք է առանձնապես խնամքով, հատուկ ուշադրությամբ մոտենա զտման յենթակա ամեն մի ընկերի։ Զտումը պետք է դուրս գցի նրանց, ովքեր «չեն արդարացնում կուսակցության անդամի բարձր կոչումը», նա պետք է և՛ վերադաստիարակի, և՛ բարձրացնի ուղղվելու ընդունակ մարդկանց, մինչև այժմ իրենց ունեցած թերություններն ուղղելու ընդունակ մարդկանց։

Զտման հանձնաժողովների աշխատանքը բացառիկ պատասխանատու գործ է։ Թերևս չկա ավելի պատասխանատու ու դժվարին աշխատանք, վորովհետև այստեղ գործը վերաբերում է կենդանի մարդկանց։ Այստեղ մեծ տոկունություն, կայունություն ու հաստատակամություն և միևնույն ժամանակ մեծ զգայնություն, համբերատարություն ու հմտություն է պետք՝ վոչ թե ձևականորեն մոտենալու մարդուն, այլ քննելու ըստ եյության, վոչ թե փորփրելու մանրունքը, այլ կարողանալու վորոշել կուսակցության ավյալ անդամի համար գլխավորը, բնորոշը։

Զտմանը պետք է մասնակից դարձնել բանվորա-գյուղացիա-

կան լայն մասսաներին։ Կուսակցության յուրաքանչյուր անդամ պետք է հասկանա, որ զտումը միայն հանձնաժողովի գործը չի, և ինքը պետք է ակտիվ մասնակցի զտմանը։

Մեր կուսակցությունն իրեն մաքրում է նրա համար, որ ավելի մարտունակ դառնա, որ սրի իրեն և կուսակցության մուրճն ավելի լավ կոփի, որ մեր ապարատն ավելի լավ աշխատի, որ մեր տնտեսությունն ավելի լավ զարգանա, որ կանցելյարշչինան ու բյուրոկրատիզմը ավելի արագ վերացվեն, որ բանվորական մասսաները և գյուղացիությունը ավելի լավ ապրեն։ Ահա թե ինչու համար ենք կատարում մենք զտումը։ (Ծափեր)։

3. ԶՏՈՒՄԸ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻԴԵՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Ներկա զտման ժամանակ մենք գործադրում ենք այնպիսի միջոց, որը չի յեղել նախորդ զտումների ժամանակ,— փոխադրել թեկնածու և համակրող։

Վերջին տարիներս մեր կուսակցության մեջ մտել են հսկայական թվով մարդիկ, որոնք համակված են շինարարության խանդավառությամբ և ձգտում են անկեղծորեն, աղնվորեն ոգնել մեր կուսակցությանը յերկրի մեծ վերակառուցման դժվարին աշխատանքում։ Սակայն կուսակցության մեջ մտած նրանց մի մասը դեռ չի բավարարում այն նվազագույն պահանջներին, որոնք ներկայացնում է բայլշևիկյան կուսակցությունը յուրաքանչյուր անդամին ու թեկնածուին։

Թեկնածուների մեջ, որինակ, կան մարդիկ, որոնք վոչ միայն չեն յուրացրել քաղաքական-հիմնական գիտելիքները, այլ և չունեն կայունության, տոկունության, կուսակցական կարգապահության այն աստիճանը, որոնք պահանջվում են կոմունիստական կուսակցության անդամից կամ թեկնածուից։ Թույլ չտալով դիտել այդ մարդկանց որպես զտվածներ, որովհետև նրանք հակակուսակցական վոչ մի բանով չեն դրսևորել իրենց և աղնվորեն, անձնվիրաբար աշխատում են արտադրության մեջ կամ կոլտնտեսության մեջ, բայց կարիք ունեն դեռ լրացուցիչ պատրաստության, որ արդարացնեն կուսակցության անդամի կամ թեկնածուի բարձր կոչումը,— անհրաժեշտ է այդպիսի ընկերների վերաբերմամբ կիրառել նրանց ժամանակավոր փոխադրումը համակրողների կարգը։

Համակրողների կարգը փոխադրվածները կուսբջիջների շուրջը կմիավորվեն որպես համակրողների խմբակներ։ Նրանց առաջ չեն փակվում կուսակցության դռները. նախ, համակրողների խմբակը ինքը հանդիսանում է կուսակցության նախադուռը, այնուհետև, մի տարուց հետո համակրողների կարգը փոխադրվածները կարող են հարց արծարծել իրենց՝ կուսակցության անդամների կամ թեկնածուների շարքը վերադարձնելու մասին։

Մենք նույնպիսի մոտեցում պետք է ունենանք կուսակցության այն անդամների նկատմամբ, որոնք նվիրված են կուսակցության գործին, բայց չունեն տարրական քաղաքական գիտելիքներ կուսակցության նպատակների ու ծրագրի մասին, նրա քաղաքականության ու կարևորագույն վորոշումների մասին։ Նրանք ժամանակավորապես պետք է փոխադրվեն թեկնածուների կարգը, ավելի լավ պատրաստվելու նպատակով։ Նրանք ևս հնարավորություն կստանան մի տարուց վերընդունվել որպես կուսակցության անդամ, յեթե կարողանան այդ ժամանակամիջոցում բարձրացնել իրենց քաղաքական զրագիտությունը։

Պարզ է, իհարկե, որ զտման հանձնաժողովները կուսակցականներին չեն մոտենա այնպես, ինչպես քննիչները մոտենում եյին գիմազիստներին։ Մենք շփոթեցնող քննությամբ չպետք է զբաղվենք, չպետք է կուսակցության անդամից, մանավանդ շարքային բանվորից ու կոլտնտեսականից պահանջենք, որ նա գիտենա բոլոր նրբությունները, բոլոր մանրամասնությունները։

Կա կուսակցության այնպիսի անդամ, որը հասկանում է, թե ինչին է ձգտում մեր կուսակցությունը, նա հասկանում է մեր կուսակցության ծրագրի եյությունը, նա հասկանում է դասակարգային պայքարի եյությունը, սակայն միշտ չի կարող բավականաչափ պազորոշ ու կապակցված կերպով պատմել իր հասկացածը։ Իսկ յերբեմն պատահում է նաև այնպես, որ մարդ մինչև զտումը ամեն ինչ գիտի, ամեն ինչ հասկանում է, իսկ զտմանը գալուց հետո շփոթվում է՝ ինչպես քննության ժամանակ, ամեն ինչ գլխից դուրս է թռչում, վոչինչ չի կարողանում ասել։

Ցեվ ահա զտման հանձնաժողովի խնդիրն է՝ քննել ըստ եյու-

թյան, հաշվի առնել կուսակցության անդամի կամ թեկնածուի ընդհանուր մակարդակը և ստեղծել այնպիսի մթնոլորտ, վոր կուսակցության անդամը կամ թեկնածուն իրեն չզգա ինչպես դպրոցականը քննության ժամանակ, չվախենա, վոր նրան կբռնեն այս կամ այն ձևակերպման մեջ կամ կտան «մոլորեցնող» հարցեր։ Անհրաժեշտ է ավելի քիչ հետևել ձևական պահանջներին, ձևական գիտելիքներին, պերճախոս ճարտասանական շարադրության, ավելի խորը թափանցել էության մեջ։

Սակայն միևնույն ժամանակ մենք չպետք է թույլ տանք այնպիսի դրություն, վոր կուսակցության անդամը կամ թեկնածուն չհասկանա մեր կուսակցության նպատակներին ու խնդիրներին վերաբերյալ ամենապարզ բաները, թե ինչի և ինչպես է ձգտում կուսակցությունը և ում դեմ է պայքարում նա կուսակցությունից դուրս և նրա ներսում։ Յեթե կուսակցության անդամը կամ թեկնածուն չգիտի այդ տարրական հարցերը, ապա, իհարկե, վորքան էլ անհաճո լինի նրան, կուսակցությունն իրավունք ունի ասելու. «Դու նախ պատրաստվիր, ապա միայն կլինես առաջավոր կուսակցության իրավազոր անդամը»։

Քաղաքական տարրական հարցերը չգիտենալու համար կուսակցության անդամից թեկնածուների, իսկ թեկնածուներից համակրողների կարգը փոխադրելու հարցն ըստ ինքյան նշանակում է, վոր մենք կուսակցության անդամին և թեկնածուին ներկայացնում ենք վոչ թե անսովոր հանդամանքներից բղխող ծայրահեղ պահանջներ, այլ ղեկավար կուսակցության անդամի համար միանգամայն նորմալ պահանջներ, վոր արդեն կուսակցության մեջ մտնելիս պետք է տարբերվի անկուսակցականներից հենց իր ավելի մեծ գիտակցությամբ և առաջավորությամբ։ Չե՞ վոր անկուսակցական բանվորն իրավունք ունի կուսակցության ամեն մի անդամին ու թեկնածուին հարց տալ՝ «Դեհ, դու կուսակցության մեջ մտար, ուրեմն դու ավելի գիտակից ես, քան յես։ Բացատրիր ինձ, խնդրեմ, ինչպիսի նպատակներ է դնում իր առաջ բայշևիկյան կուսակցությունը։ Բացատրիր ինձ այս կամ այն կուսակցական վորոշումը»։ Կուսակցության ինչ անդամ կամ թեկնածու յե նա, յեթե չկարողանա պատասխանել անկուսակցական բանվորի ամենապարզ հարցերին։ Հասկանալի յե, իհարկե, վոր այդպիսի մարդը նախ պետք է մի քիչ պատրաստվի և հետո մտնի կուսակցության մեջ, կամ կուսակցության մեջ մտնելով պետք է ամեն կերպ, արագ տեմպով, ինչպես վայել է բայշևիկին, տիրապետի գիտելիքների այն նվազագույն չափին, պետք է ըմբռնի մեր կուսակցության էությունը, առանց վորի կուսակցության անդամը կամ թեկնածուն առաջավոր մարտիկ չի բառիս լիակատար իմաստով։

Վերջին տարիներս կուսակցությունը մեծ աշխատանք կատարեց կուսակցության անդամների գաղափարական մակարդակը բարձրացնելու, գիտելիքներ տարածելու, կուսակցական դպրոցներ կազմակերպելու ասպարիզում։ Կուսակցությունը բարելավեց դասատուների կազմը, բարձրացրեց վերջինս քանակապես ու վորակապես։ Զուտ ինքն էլ ավելի կնպաստի այդ գործին։ Սակայն յես կարծում եմ, վոր կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը, նրա կարևորագույն վորոշումները յուրացնելու գործում մենք զտման կես տարվա ընթացքում ձեռք կբերենք այնպիսի արդյունքներ, վորոնք նորմալ պրոպագանդիստական աշխատանքի պայմաններում մենք ձեռք կբերեյինք միայն մեկ-յերկու տարվա ընթացքում։

Մանավանդ վոր այժմ մարդիկ զտումից առաջ կենտրոնանում են իրոք հիմնական հարցերի վրա և վոչ թե այնպես, ինչպես կատարվում եր մեր մի շարք կուսդպրոցներում, յերբ առանձին դասատուներ, փոխանակ պարզ ու հստակ շարադրելու կուսակցության անդամի և թեկնածուի համար նվազագույն անհրաժեշտ հիմնական հարցերը, կապիտալիստական հասարակարգի էության բացատրումը սկսում եյին ապրանքային ֆետիշիզմի «խորիմաստ» վերլուծումից։ Ըստ յերևույթին, իրենց հարգող այդ դասատուները գտնում եյին, վոր իրենք «Մարքսից պակաս չեն»։ Յեթե Մարքսն իր «Կապիտալը» սկսել է ապրանքային ֆետիշիզմից, ապա ինչո՞ւ նրանք իրենց դասավանդումը չպետք է սկսեն ապրանքային ֆետիշիզմից։ (Ծիծաղ)։

Իհարկե, ապրանքային ֆետիշիզմն էլ պետք է գիտենալ։ այդ շատ կարևոր է և շատ լավ է, սակայն դրանից չէ, վոր պետք է սկսել։ Համենայն դեպս պետք է հուսալ, վոր մեր զտման հանձնաժողովները չեն սկսի պարզել կուսակցության անդամի գիտելիքներն ապրանքային ֆետիշիզմից։ (Ծիծաղ)։

Յես մանրամասնորեն չեմ խոսի քաղգիտելիքների այն պահանջների մասին, վորոնք պետք է պահանջվեն կուսակցության անդամից կամ թեկնածուից։

Չի կարելի, որինակ, կուսակցության յուրաքանչյուր անդամից պահանջել, վոր նա գիտենա իմպերիալիզմի տեսությունը, վոր նա զեկուցում տա համաշխարհային տնտեսության և հեղափոխական սիտուացիայի վերաբերյալ, ինչպես այդ կարող եր անել, ասենք, համաշխարհային տնտեսության Կարմիր Պրոֆեսուրայի Ինստիտուտի ունկնդիրը։ Սակայն կուսակցության անդամը պետք է հասկանա, թե ինչ է կապիտալիզմը և թե ինչու նա անխուսափելիորեն պետք է կործանվի։ Չէ՞ վոր մեր հավատը դեպի սոցիալիզմը կրոնական հավատից տարբերվում է հատկապես նրանով, վոր մեր հավատը գիտական է, հիմնված է մեր գիտության վրա։ Մենք սոցիալիզմին հավատում ենք վոչ թե այն պատճառով, վոր ցանկանում ենք, այլ այն պատճառով, վոր գիտական, մարքսիստական-լենինյան վերլուծման հիման վրա հավատում ենք, վոր անխուսափելի յե կապիտալիզմի կործանումը, անխուսափելի յե սոցիալիզմի հաղթանակը։ Իսկ կապիտալիզմի կործանման անխուսափելիությունը պետք է հասկանալ վոչ թե պարզապես գիտենալու, հետաքրքրությունը բավարարելու համար, այլ վորպեսզի ավելի զինված, ավելի կռվված լինենք կապիտալիզմի դեմ մղվող պայքարում, այն մարդկանց դեմ մղվող պայքարում, ովքեր փաստորեն ոգնում են կապիտալիզմին և ոժանդակում են նրան։

Կամ վերցնենք ահա յերկրորդ հարցը։ Ձեզ հայտնի յեն ոպոզիցիոներների վեճերը կուսակցության հետ, մի յերկրում, կոնկրետ՝ մեր յերկրում, սոցիալիզմի հաղթանակի հնարավոր լինելու մասին։ Իհարկե, պրոլետարների, նույնիսկ տեսությունից վոչ այնքան իրազեկ պրոլետարների մեծամասնությունն այստեղ իսկույն զգաց, վոր կեղծիք ու դավաճանություն կա ոպոզիցիոներների այն հարցադրման մեջ, թե մեր յերկրում սոցիալիզմի կառուցումն անհնարին է։ Ամեն մի ազնիվ պրոլետար պարզ կերպով այսպես է դատում. «Յեթե մեր յերկրում հնարավոր չէ սոցիալիզմ կառուցել, ապա ի՞նչ կարիք կար զործ ստեղծել, ի՞նչ կարիք կար Հոկտեմբերյան հեղափոխություն կատարել»։

Սակայն վորպեսզի ինչպես հարկն է զինված լինենք մերկացնելու համար մի յերկրում սոցիալիզմի կառուցման հնարավորության բուրժուական-տրոցկիստական ժխտումը, անհրաժեշտ է, վոր մենք հիմնականում իմանանք, թե ժխտել հիմնական տեսական դրույթը՝ մի յերկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորության մասին, նշանակում է՝ ամբողջովին գլորվել 2-րդ ինտերնացիոնալի բուրժուական-մենշևիկյան դիրքերը, նշանակում է հրաժարվել Հոկտեմբերի նվաճումներից և վերադառնալ դեպի կապիտալիզմը։ Անհրաժեշտ եր ընկ. Ստալինի տեսական բացառիկ խորաթափանցությունն ու համառությունը Լենինի ուսմունքը պաշտպանելու համար։

Վորպեսզի կուսակցության անդամը կայուն լինի (իսկ կայուն լինել նշանակում է չնահանջել դժվարություններից, կարողանալ հոսանքի դեմ գնալ, կարողանալ իր հետևից տանել հետ մնացողներին), քիչ է պարզապես ցանկանալ կայուն լինել, այլ պետք է հասկանալ, վոր մենք պայքար ենք մղում վոչ միայն մանր, ամենորյա շահերի համար, այլ հասկանալ, վոր մենք, վորպես բայշևիկների կուսակցություն, իրենց բանվորական անվանող, իսկ իրոք մանր-բուրժուական և բուրժուական մյուս կուսակցություններից տարբերվում ենք նրանով, վոր գիտենք մեր ամբողջ պատմության ընթացքում այսորվա շահերի համար մղվող պայքարը կապակցել մեծ նպատակների, սոցիալիզմի համար մղվող պայքարի հետ, գիտենք անհրաժեշտ դեպքում այսորվա շահերը յենթարկել վերջնական հաղթանակի շահերին, թեկուզ ժամանակավոր դժվարությունների ու զրկանքների հաղթահարման գնով։

Մենշևիկները մեզ վախեցնում եյին դժվարություններով, պարտության նախագուշակումներով, արյունահեղության ու կործանման նախագուշակումներով, յերբ մենք գրոհ եյինք տալիս բուրժուական պետության դեմ 1917 թվականին։ Կուսակցությունը, Լենինի գլխավորությամբ, չվախեցավ դժվարություններից և կռվի տարավ պրոլետարիատին ու ջախջախեց թշնամիներին։ Տրոցկիստները, աջ ոպորտունիստները, ուկլոնիստները և ամեն տեսակ ոպոզիցիոները դժվարություններով, պարտություններով, ամեն տեսակ այլ սարսափելի խոսքերով եյին վախեցնում մեզ, յերբ կուսակցությունը ընկ. Ստալինի գլխավորությամբ գրոհի տարավ պրոլետարիատին կապիտալիզմի տնտեսական հիմունքների դեմ, յերբ կուսակցությունը ծավալուն արշավի դուրս յեկավ կապիտալիստական տարրերի դեմ։ Յերկրի ինդուստրիացումը և գյուղատնտեսության կոլեկտիվացումը դժվարին գործ է։ Առաջին հնգամյակի իրականացումը

մեծագույն ջանքեր պահանջեց։ Ինչպես ուրեմն կուսակցությունը և նրա Կենտկոմը մարտի հանեցին մասսաներին և, չնայած դժվարություններին՝ կազմակերպեցին նրանց յերկրի ինդուստրիացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման համար։ Վորովհետև կուսակցությունն ու առաջին հերթին նրա առաջնորդ ընկ. Ստալինը՝ տեսականորեն ըմբռնում եյին, վոր յեթե յերկիրը գնա տրոցկիստների ու աջ ուկլոնիստների ցույց տված ճանապարհով, ապա մեզանում վոչ միայն սոցիալիզմը չի կառուցվի, այլև պրոլետարիատի դիկտատուրան կխորտակվի. իշխանություն նվաճելը, կապիտալիստներին դուրս վռնդելը դեռ քիչ բան է նշանակում. հարկավոր է վոչնչացնել այն արմատները, վորոնցից ծնունդ է առնում կապիտալիզմը, հարկավոր է փոխել, վերակառուցել յերկրի եկոնոմիկան։

Յեթե կուսակցությունը կարողացավ ջախջախել հակալենինյան տեսություններն ու տրոցկիստների ու աջ ուկլոնիստների քաղաքականությունը, վորոնք դեպի կապիտալիզմի վերականգնումն եյին տանում, յեթե կուսակցությունը կարողացավ յերկիրը դուրս բերել սոցիալիստական շինարարության լայն ճանապարհը և ամրապնդել պրոլետարիատի դիկտատուրան, ամրապնդել բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքը, դրա համար մենք պարտական ենք պրոլետարիատի դիկտատուրայի բնույթի ու խնդիրների խորը և ճիշտ տեսական ըմբռնմանը։ Կուսակցությունն այդ բանին կարողացավ հասնել պրոլետարիատի դիկտատուրայի վողջ հզորությունը դասակարգային թշնամիներին ճնշելու համար հաստատակամորեն կիրառելու շնորհիվ, յերկրի սոցիալիստական վերակառուցման գործի և բարձր հիման վրա, գյուղատնտեսության կոլեկտիվացման և մեքենայացման հիման վրա բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքն ամրապնդելու համար պրոլետարական պետության վողջ կազմակերպող ուժը կարող կերպով կիրառելու շնորհիվ։

Լինել կուսակցության հավատարիմ անդամ, չշեղվել նրա գծից, պայքարել թեքումների դեմ—այդ նշանակում է վոչ միայն ցանկանալ այդպիսին լինել, այլ ըմբռնել, հասկանալ կուսակցության քաղաքականությանը վերաբերվող հիմնական հարցերն ու նրանց նպատակը։

Մեր կուսակցությունն անհաշտ է կուսակցության տեսական հիմքերից և քաղաքականությունից շեղվողների նկատմամբ։

Ինչպես մեր կուսակցությունն իր շարքերում թույլ չի տալիս ֆրակցիոնականություն։ Ոպորտունիստները՝ սկսած մենշևիկներից և վերջացրած ներկուսակցական ոպոզիցիոներներով՝ միշտ առաջ են քաշել «ապրիր և թույլ տուր ապրել նաև մյուսներին» լոզունգը, այլ կերպ ասած՝ տարաձայնություն, բազմակենտրոնություն թույլ տվեք կուսակցության ներսում։ Իրենց այդ տեսակետը նրանք նույնիսկ «հիմնավորում» եյին հենց կուսակցության ոգտին, թե իբր «տարբեր կարծիքներից ճշմարտություն է ծնվում»։

Վորպեսզի կուսակցության անդամը կարողանա հաստատակամորեն ու ուժեղ հակահարված տալ նման դատողություններին, նա պետք է հասկանա մեր կուսակցության բնույթը։

Նա պետք է հասկանա, վոր յեթե տարաձայնությունները, անկարգապահությունը, ֆրակցիոնականությունը թույլատրվել և թույլատրվում են մանր-բուրժուական կուսակցություններում, այն կուսակցություններում, վորոնց գլխավոր խղեալը պարլամենտում ավելի շատ տեղեր ստանալը, բուրժուական դիկտատուրայի ձայնակից, «բարեմիտ ոպոզիցիա» լինելն է, ապա մեր կուսակցությունը, հեղափոխական մեծ բանակ կազմակերպող և այդ բանակը սոցիալիզմի, կոմունիզմի համար վճռական մարտերի տանող կուսակցությունը, պրոլետարիատի դիկտատուրայի կուսակցությունը չի կարող իր մեջ տարաձայնություններ, ֆրակցիաներ ու խմբավորումներ թույլ տալ։ Մեր կուսակցությունն իր ուժերը կազմակերպում է միաձուլության հիման վրա։

Կուսակցությունն իր վորոշումներում ընկ. Ստալինի բերանով մեկ անգամ չէ, վոր ընդգծել է ինքնաքննադատությունն ամեն կերպով ծավալելու, ներկուսակցական դեմոկրատիան ամեն կերպ զարգացնելու, կուսակցության անդամների ինքնագործունեությունն ու նախաձեռնությունն ամեն կերպ զարգացնելու անհրաժեշտությունը։ Հենց ինքը զտումը ինքնաքննադատության արտահայտությունն է։

Վերջին տարիների ընթացքում ինքնաքննադատությունը կուսակցության ու բանվոր դասակարգի ներսում ծավալվել է այն աստիճան, ինչպես նա յերբեք ծավալված չի յեղել։ Նա ծա-

վալվել է կուսակցության անդամների ինքնագործունեության ու նախաձեռնության աճման հիման վրա, սոցիալիստական մրցման ու յերիտասարդության ակտիվության զարգացման հիման վրա։ Կուսակցությունը աշխատավորական նոր մասսաներ է վոտքի հանել ու մասնակից դարձրել սոցիալիզմի մեծ կառուցմանը։ Մեր ինքնաքննադատությունը, մեր ներկուսակցական դեմոկրատիան ուղղված են ռեվիզիոնիստների, ոպորտունիստների դեմ՝ հանուն կուսակցության կարգապահության ամրապնդման, հանուն կուսակցության շարքերի ամրապնդման, հանուն մեր հաղթական առաջխաղացման, հանուն մեր բոլոր ուժերի մոբիլիզացիայի՝ հաջողությամբ առաջ տանելու մեր յերկրում և վողջ աշխարհում սոցիալիզմի լիակատար հաղթանակի համար մղվող պայքարը։ (Ծափահարություններ)։

Տարբեր գույնի ոպորտունիստները վախեցնում եյին կուսակցությանը պառակտումով։ Վոչ միայն պառակտում, այլ կուսակցության լիակատար քայքայում տեղի կունենար, յեթե կուսակցությունը տարվեր այդ խղճուկ դասալիքների և դավաճանների տրամադրություններով։ Հենց նրա համար, վոր մենք անողոքաբար դուրս եյինք վռնդում մեր շարքերից ոպորտունիստներին ու ֆրակցիոներներին՝ հենց դրա համար էլ մեր բայլշևիկյան կուսակցությունն այժմ, 1933 թվականին հզոր ու միաձույլ է այնպես, ինչպես նա յերբեք չի յեղել։ (Բուռն ծափահարություններ)։

Մեր կուսակցությունն այժմ՝ ավելի քան յերբևիցե՝ զինված է հաստատապես ու անշեղորեն առաջ ընթանալու համար։ Առաջին հնգամյակի փայլուն հաղթանակների հետևանքով մենք այժմ բոլոր հնարավորություններն ունենք կարճ ժամանակում մեր յերկիրը հարկ յեղած բարձրության հասցնելու։ Այս հատկապես վերաբերում է գյուղատնտեսության ընդգավառին, ուր վերջին ժամանակներս լուրջ բեկում ենք նկատում շնորհիվ այն բացառիկ ուշադրության, հոգատարության և գործը պրակտիկ ձևով կազմակերպելու, վոր հանդես են բերում կուսակցությունը և առաջին հերթին՝ ընկ. Ստալինը։ Այնտեղ դեռ զգալի դժվարություններ կան, սակայն նրա տեխնիկական զինվածության սիստեմատիկ աճման ու գործի կազմակերպումը բարելավելու շնորհիվ, հազարավոր նոր կազմակերպիչներ գյուղ ուղարկելու շնորհիվ մենք արդեն տեսնում ենք, թե ինչպես ցանքն այս տարի

ավելի լավ, զգալի չափով ավելի կազմակերպված է ընթանում, քան անցյալ տարի։ Մենք բոլոր հնարավորություններն ունենք քաղհանը, բերքահավաքը ու հացամթերումը անցյալ տարվանից ավելի լավ անցկացնելու համար։ Ամեն ինչ կախված է մեզանից, մեր աշխատանքից, մեր հմտությունից և մենք վստահ ենք, վոր կուսակցությունը, նրա հետ գնացող մասսաներն ավելի մեծ բարձրության կհասցնեն մեր գյուղատնտեսությունը։ (Ծափեր)։

Դրա համար կարևոր է ավելի բարելավել կուսակցության աշխատանքը, մաքրել նրա շարքերը անպետք տարրերից։ Զտումը պետք է բարձրացնի վոչ միայն կուսակցության ամեն մի անդամին առանձին, այլ պետք է բարձրացնի կուսակցական ամբողջ կազմակերպության աշխատանքը և վերացնի նրա մեջ գոյություն ունեցող թերությունները։

Մոսկվայի մեր կազմակերպությունը զգալի հաջողություններ ձեռք բերեց վերջին տարիներս։ Սակայն ամբողջ Միության կուսակցական կազմակերպությունների աշխատանքում գոյություն ունեցող թերությունները կան նաև մեզ մոտ՝ Մոսկվայում։ Մեր խնդիրն է՝ զտման շնորհիվ բարձրացնել մեր մայրաքաղաքի կուսակցական կազմակերպության աշխատանքը ավելի բարձր մակարդակի։

Ցեռ համոզված եմ, վոր բայշևիկների Մոսկվայի կազմակերպությունը, Մոսկվայի մարզի բոլոր բայշևիկները, ինչպես և մեր ամբողջ կուսակցությունը լավագույն աշխատանքի որինակներ կցուցադրեն զտման շրջանում, ցույց կտան, վոր նրանք գիտեն ինքնազտման յենթարկվել և միաժամանակ բարձրացնել իրենց աշխատանքի վորակը։ (Ծափեր)։

Մեր կուսակցության զտումը պետք է էլ ավելի ամրացնի, էլ ավելի բարձրացնի, էլ ավելի համախմբի մեր պանծալի բազմամիլիոն կուսակցությանը և աշխատավորների միլիոնավոր մասսաներին լենինյան կենտկոմի շուրջը, մեր հաղթանակներն ապահովող, կուսակցության ու բանվոր դասակարգի մեծ առաջնորդ ընկ. Ստալինի շուրջը։ (Բուռն ծափեր)։

Մեր կուսակցության զտումը կրկին ու կրկին ցույց կտա և՛ թշնամիներին, և՛ բարեկամներին, վոր մեր կուսակցությունը չի վախենում խոչընդոտներից, վորոնք ծառացած են բանվոր դասակարգի առաջխաղացման հանդեպ՝ դեպի համաշխարհային պրո-

լետարական հեղափոխությունը, դեպի սոցիալիզմի լիակատար հաղթանակը։ (Բուռն ծափեր, վոլոնք վերածվում են ովացիայի)։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հայ. Ա. Մեսրոպյանի անվան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

1. Կուսակցության զտման նշանակությունը . . . 3
2. 1933 թվի զտման առանձնահատկություններն ու խնդիրները 9
3. Զտումը և կուսակցության անդամների իդեոլոգիական մակարդակի բարձրացումը . 20

Սրբագրիչ Ա. Տ.-Մկրտչյան
Հանձնված է արտադրության 25 հունիսի 1933 թ
Ստորագրված է տպագրելու 28 հունիսի 1933 թ.
Հրատ. № 118. Տիրած 3000. Գլավլիտ 7749 (բ)

Կուսհրատի տպարան. Պատվեր № 5. 75,000 տպ. նշ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0184725

Ֆ 10

ԳԻՆԸ 60 ԿՈՊ.

Л. М. КАГАНОВИЧ

О чистке партии

Партиздат 1933 Эривань